




ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Յ Ն Օ Ր Է Ն - Խ Մ Բ Ա Դ Ի Բ
ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԵԶԻԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 27 ՕԳՈՍՏՈՍ 1911

ԹԻԻ 33

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԴՐԱԿԱՆ. — ձեմարանը. — Կարծիքներ բարե-
գործելու կերպերուն վրայ:

ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ. — Թէ ի՞նչպէս գործածելու
ենք մեր շնորհքները

ԳՐԻԳՈՐԻՍ

ՍԻՒՆԵԱՅ ԴՊՐՈՑ. — (Բ.) Լուսաւորութիւն Սիւնեաց
Կեանքին գաղտնիքը (Քերթուած)

ԳՆԷԼ Մ. Վ. ԳԱԼԵՄԲԵԱՐԵԱՆ

ԴՊՐԵՎԱՆՔՅԻ

ՆԵՐՁԾՈՒԹԻՒՆ ԺԲ. ՄԱՐԳԱՐԷԻՑ. — Ամուս (Գ.)

ԳԵՈՐԳ ՄԵՍՐՈՊ

ՀՈԳԻՆ ԳՈՅՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆԸ. — Հո-
գեպաշտութիւն եւ նիւթապաշտութիւն դէմ
դիմաց (Ե.)

ԳՐ. ԷՕԼՄԷՋԵԱՆ

ՅՈՒԼԻՈՍ ԵՒ ՊԱՄՓԻԼԻՈՍ. — Առաջին Գրիստոնեա-
ներու ժամանակուան պատմութիւն (Շար.)

ԼԷՈՆ ԹՈՂՍԹՈՑ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Շաբթուան կարեւոր լուրեր



« ՏԱՃԱՐ » ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է
գիւղի առ Զարմայր Քանանայ Կեզիւրեան, Կ. Պոլիս, Պեշիկթաշ, Հայոց Եկեղեցի:

بشيكطاش ارمنى كليسا سنده « داجار » غزته سى مديرى پاپاس زارماير افندى

Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue « DADJAR »
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Դաւառաց՝ տարեկան	40 դրու
Արսասահմանի համար	» 10 Ժրանք
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 օլար
Ձեռքէ կը ծախուի սրակը	40 փարա

Հինգ բաժանորդ զանոցը փխաւունք ունի մէկ թերթ ճրի ստանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒՆԵՐ ԼԼԻԽԻԿ ԵՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ ԴԻԻՐԱԾԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

ԳՈՐԾԱՎԱՆՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԱՅԻՍՏՈՒՄՈՒՄ. — Առաջն. Փոխա-
նորդ Տ. Արսէն Բհնյ. Իերձաղեան

ԱՂԵՔՍՍԱՆԴՐՈՒՄ. — Տ. Ռուբէն Բհնյ. Դա-
բիկեան

• ԱՄԵՐԻԿԱՆ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Գաֆիլեանեան

ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեղին Բհնյ. Պողար-
եան

ԱՅԻՕՆ ԳՍՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բհնյ. Տօնէլեան

ԲԱՐԵՐԴ. — Մ. Սանտեան Լֆ.

ԴՆԴԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բարդէն Եսա.
Կիւլէսէրեան

ԴԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-
գիսեան

ԵՈՒՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Եսիսկ.
Դիմաքեան

ԵՐՁՆԿԱ. — Տ. Մեսրոպ Բհնյ. Թորոսեան

ԶՄԻՌՆԻԱ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.
Սարգսեան

ԷՍԿԻ ՇԷՀԻՐ. — Տ. Դաւուստ Բհնյ. Տ.
Դաւուստեան

ԿԱՐԻՆ. — Առաջն. փոխանորդ Տ. Ներսէս
Ա. Բհնյ. Վահանեան

ԿԻՐԱՍՈՆ. — Սրապիտն Բհնյ. Այլաեան

ՄԱՐՍԵ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժա-
պետեան

ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ Էֆ. Սրապեան

ՆԻԿՈՒՄԻԴԻԱ. — Տ. Ռակի Բհնյ. Պրապեան

Շ. ԳՐԱԶԻՄԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.
Տառեան

ՈՒՇԱԲ. — Յարութիւն Բհնյ. Աստաքեան

ՊԱՆՏՐՄԱ. ՊԱՆԸՔԷՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Եսիսկ. Մալլաբեան

ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եսիսկ. Կէօմբիւքեան

ՌՈՒՍՃԱՐ. — Տ. Միքայէլ Բհնյ. Մըրձ-
նիկեան

ՌՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ. Տ. Գեորգ Ծ.
Վրդ. Ասլանեան

ՍԵՐԱՍԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլ Բհնյ. Օտապաշեան.

ՍԵՂԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բհնյ. Թուխմանեան

ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Բհնյ. Տրէդ-
եան

ՏԻԴՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ Լֆ. Մովսէս-
եան

ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վահանա-
պետ Բհնյ. Բիպարեան

ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.

ՅՐԷՁՆՕ. — Յակոբ Էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 27 ՕԳՈՍՏՈՍ 1911

ԹԻԻ 33

ԿՄԱՐԱԳՐԱԿԱՆ

ՃԵՄԱՐԱՆԸ

ԿԱՐՄԻՔՆԵՐ ԲԱՐԵԴՈՐԾԵԼՈՒ ԿԵՐՊԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Սկիւտարցիւն, լաւ եւս հայ ազգը
կրթական նոր եւ փառաւոր շէնքով մը
եւս օժտուեցաւ :

Կիրակի օրը, Սկիւտարի հայութեան
ստուար մէկ մասը խոնուած էր նորա-
կառոյց ճեմարանի հոյակերտ շէնքը,
որուն բացումը կը կատարուէր այդ-
պատմական Հաստատութեան մէկ
նախկին սանին, Ա.մն. Տ. Եղիշէ Ս.
Արքեպ. Դուրեանի նախագահութեան
տակ :

Հանդէսը տպաւորիչ էր, եւ թե-
լադրեց մեզի մտածումներ որոնց՝ ըն-
թերցողը հազորդակից ընել օգտակար
կը նկատենք :

Նուիրատուն եւ եղած հոյակապ
նուէրը ամենէն առաջ գրաւեցին մեր
ուշադրութիւնը: Չէինք ճանչնար անձ-
նապէս Լեւոն Էֆ. Սէմէրճեանը: Բա-
րեկամներ ցուցուցին մեզ զինքը՝ հրա-
ւիրեալներու կարգին՝ համեստ գէմ-

քով, համեստ նիւտ ու կացով, որ եր-
բեք իր վրայ չէր ցուցներ «բարե-
րար»ի սնափառութիւնը, նշոյլը չէր
ցուցներ յոխորտանքի, որով կարգ մը
quasi-բարեգործներ իրաւունք ունե-
նալ կը կարծեն՝ ջնջին նուէրի մը հա-
մար՝ երախտագիտական ցոյցերու ա-
ռարկայ դառնալու: Զգացինք թէ ցու-
ցամոլի մը հետ չէ մեր գործը: Նուիր-
ատուն պարտականութեան գիտակ-
ցութեամբը շարժած է, եւ իրեն
միակ վարձատրութիւն՝ բաւական կը
սեպէ պարտքը կատարած ըլլալու
քաղցր գոհունակութիւնը: Այդ գի-
տակցութիւնն է որ առաջադրել կու-
տայ իրեն՝ նորակառոյց ճեմարանը
Մանկապարտէզի յարկով մ'ալ օժտե-
լու, ինչպէս աւետեց նախագահ սըր-
բազանը:

Բայց նուիրատուին քով, հիանալի
պարտաճանաչութեան մը հետ, շնոր-
հաւորելի է մանաւանդ իր գիտակցու-
թիւնը՝ օրուան ամենէն ստիպողական
պէտքին :

Այս սիւնաքարերուն մէջ մենք խօ-
սած ենք բարեգործելու լաւագոյն
եղանակին վրայ, միեւնոյն ատեն շեշ-

տեղով թէ իրաւացի եւ արդար չէ քննադատել ոեւէ նախարարու, իր բարեգործութիւնն ընելուն համար այն. սկիսի ուղղութեամբ որ ամենէն ստի. պողական ու անհրաժեշտը չի բերեր մեզի: Կը կրկնենք թէ իրաւունք չունինք դատաւիտելու ոեւէ մէկը, երբ երկրորդական պէտք մը կը լրացնէ իր առատ նուիրաբերութեամբ. որովհետեւ այդ քննադատութիւնները բոլորովին տարբեր արդիւնք առաջ կը բերեն յարձախ, ցամքեցնելով բարերարութեան աղբիւրը: Պէտք է թողուլ, կ'ըսէինք, բարեգործները՝ յառաջանալու այն շաւղին մէջ զորս լաւագոյնը կը նկատեն, բայց միեւնոյն ատեն անհրաժեշտ է բարեգործութեան լաւագոյն ճամբան ցուցնել մեր մեծատուններուն, քարիք գործելու արուեստը պէտք է սորվեցնել անոնց:

Ուրախ ենք որ այդ արուեստը շատ լաւ սորված է ազնիւ նուիրատուն: Ինքը ճանչցած է ժամանակին պէտքը, գիտցած է թէ նոր ժամանակներ նոր պահանջներ կը ստեղծեն, եւ այդ պահանջներուն ամենէն էականն է տղոց դաստիարակութիւնը: Ու 4000 ոսկիի զոհաբերութեամբ մը՝ անձայն անշուշտ՝ Սկիւտարի բարձունքին վրայ կառուցած է կրթութեան տաճար մը հոյաշէն, որուն նմանը հազիւ թէ կրնանք գտնել Պոլսոյ ազգային կրթական հաստատութեանց մէջ, եւ որ պատիւ կը բերէ իր ճարտարապետին ալ, Սարգիս Էֆ. Թաշճեանի:

Շատ ուշագրաւ կէտ մ'ալ, ինչպէս դիտել տուաւ Ճեմարանին նորընտիր տնօրէն Պ. Մար. բարերարին՝ ի կենդանութեան իսկ վայելելն է իր նուիրատուութեան գեղեցիկ արդիւնքը: Մեր մէջ բարերարութիւնները սովորութիւն է յետ-մահու ի գործ դնել կտակներով, որոնք՝ աւանդ՝ անգործադրելի կը մընան եւ կը կոտորակուին, կը ջնջուին

յարձախ: Ներկայ պարագան եթէ ոչ բոլորովին նոր, շատ հազուադէպ է մեր մէջ, եւ ջերմապէս ջնորհաւորելի:

Պիտի փափաքէինք այս երեք գեղեցիկ յատկութիւնները տարածուած տեսնել բարերարելու կարող մեր մեծատուններուն մէջ, այն է՝ համեստութիւնը քաղաքական մեջ, պէտքի գիտակցութիւնը քաղաքական մեջ, քաղաքականութիւնը ի կենդանութեան իսկ:

Եւ սակայն կրթական յարկի մը բացումին այդ հանդէսը ուշագրաւ էր՝ արտասանուած բանախօսութիւններով ալ: Ուսումն. Խորհուրդին կողմէ Թովհ. Էֆ. Յակոբեան եւ նորընտիր տնօրէն Պրն. Մար. պարգեցին շատ կարեւոր հայեացքներ՝ կրթական հրատապ հարցին վրայ: Իրենց տեսութիւնները, ըստ երեւութի իրարու հակընդդէմ, նոյն եզրակացութեան կը յանդէսնէին: Իրաւունք ունէր Ուսումն. Խորհուրդոյ ներկայացուցիչը՝ յայտարարելով որ Հայ մանուկին դաստիարակութիւնը ո՛չ գերմանական պէտք է ըլլայ, ո՛չ ֆրանսական, ոչ ալ ամերիկեան, այլ էապէս հայկական, հայ տղան պէտք է կրթուի իբրեւ հայ եւ իբրեւ օսմանցի: Նոյնքան իրաւացի էր Պրն. Մար. հաստատելով թէ մենք պէտք է օգտուինք եւրոպական ազգերու փորձառութենէն, կրթական նորապոյն դրութիւնները եւ հայեացքները առաջնորդ ունենալով մեզի, պայմանով անշուշտ որ ատոնք յարմարցնենք մեր միջավայրին եւ մեր տոհմային նկարագրին: Գոհացուցիչ էր լսել Պրն. Մարէն՝ թէ անհրաժեշտ է տղոց մէջ ծնունդանել յարգանքի զգացումը դէպ իրենց մեծերը եւ կարգապահութեան ոգին: Բայց մանաւանդ ուշագրաւ եւ որքան ճիշտ էր իր գծած պատկերը՝ Թրքա.

Հայ ուսուցչութեան մասին, որոնց մէջ աֆրաքան սակաւութիւն են իրենց պաշտօնին իրապէս պատրաստութիւնները: Սրտի սեղմումով մը լսեցինք իր դժգոհ յայտարարութիւնը, թէ մինչ Ռուսահայոց մէջ մէկ քանի տասնեակ տարիներէ ի վեր որոշ կազմակերպութիւն մը ունի ուսուցչութիւնը, թուրքիոյ մէջ ամէն բան անկախօն, անկազմ, անպատրաստ է. տարրական վարժարանէ շրջանաւարտ մը — եւ ի՞նչ շրջանաւարտ — կ'ուզէ ուսուցիչ ըլլալ տարրական վարժարանի մէջ, եւ յաճախ ոչ մէկ վարժարանէ շրջանաւարտ եղաւ մը կը նկրտի այդ պաշտօնին (1):

Մեր ուսուցիչներու ակամօքն օղ պէտք է ըլլար Պրն. Մարի այն խօսքը թէ ուսուցիչը ամէն բանէ առաջ եւ ամէն բանէ վեր իր խիղճը ունենալու է իրեն դատաւոր, մանաւանդ այն աշակերտները՝ որոնք իր ինամքին յանձնուած են. ուսուցիչը անոնցմէ՛ պէտք է ակնածի, այդ պղախկ հոգիներէն:

Թաղ. Խորհրդոյ կողմէ Սարգիս Էֆ. Սաբանանի, նախկին շրջանաւարտներու կողմէ Նշան Էֆ. Վալիտէանի եւ Յարութիւն Էֆ. Հազարապետեանի եւն. զգալուն շեշտերով արտասանած բանախօսութիւններէն ետքը, որոնք իրենց ազապատանքը կը պարզէին ճեմարանին, փայլուն տաղանդներ արտադրող այդ հոյակապ Հաստատութեան նկատմամբ, հանդէսը փակեց այն ոսկեղէն Միտքը, Ամեն. Դուրեան սրբազանը, որ կը նախագահէր: Իր խօսքերը՝ սրամիտ եւ լուրջ՝ խոր տնայաւորութիւն թողուցին: Չափաւորեց

(1) Ճշմարիտ յուզումով լսեցինք Պրն. Մարի պատմած մէկ միջադէպը Թէ պաշտօն խնդրելու համար իրեն դիմող շատ մը ուսուցիչներու և ուսուցչուհիներու մէջ զանազան է օրինակ մը, որ երբ բաց պաշտօն մը մնացած ըլլալն յայտարարուած է իրեն, խնդրեր է վարժարանին մէջ ծառայել . . . Գոնէ իբր պատուին:

Նախորդ մէկ քանի բանախօսներու թափը, որով կը պանծացնէին ճեմարանը, անոր փառքի օրերը, եւ անոր հասուցած փայլուն տաղանդները: Նըկարագրեց 40 տարի առաջուան ճեմարանը, իբր կրթարան մը ուր հազիւ թէ տարրական կրթութիւն մը կ'աւանդուէր աֆրաքի վարժապետներով որոնք մինչեւ իրիկուն կը քնանային, եւ հազիւ թէ օրուան մէջ մէկ դաս կ'աւանդուէր, այնպէս որ, ըսաւ, կը զարմանամ թէ ի՛նչպէս ապուշ չեղանք: Հաստատեց թէ ազգին մէջ դիրք եւ սնունդ ունեցող մեծ գէմքերը ճեմարանէն չառին զիրենք նշանաւոր ընող կարողութիւնները, ու վարժապետներու խեղճութիւնը մատնանշելու համար, յիշեց թէ ինքը եւ ուրիշ ընկերներ, ութ հոգի, արտաքսուեցան այդ վարժարանէն, իրենց ուսուցչին մասին դիտողութիւն եւ գանգատ յայտնած ըլլալուն համար: Հաստատելու համար թէ ուսուցիչներու նկատմամբ դժգոհութիւնը նոր եւ միայն մեր ազգին յատուկ չէ, յիշեց Պուտարքոսի խօսքը՝ երկու հազար տարի առաջ Յոյներուն համար ըսուած՝ թէ մենք մեր գերիներուն ամենէն արեւիճները, անկարողները կը յատկացնենք մեր տղոց կրթութեան, յիշեց Ոսկեբերանի նմանօրինակ գանգատը՝ ուսուցիչներու մասին, ու շեշտեց պէտքը կարող, իրենց պաշտօնին գիտակից ուսուցիչներ պատրաստելու: Լաւատեսութեամբ վերջացուց Սրբազանն իր խօսքը, բաղդատութիւն մ'ընելով ընդ մէջ քառասուն տարի առաջուան վիճակին եւ հիմակուան: Ահա մեծատ է, ըսաւ, յառաջդիմութիւնը, եւ հետզհետէ աւելի գիտակից ջանքեր պիտի նպաստեն շեշտելու ատիկա: Ու ներքոյն ընելով ազնիւ նուիրատուին, ըսաւ թէ ինքը պղտիկ մ'նացած է անոր քով. ուստի իբր փոքր լուծայ, կը խոստա

հայ տարեկան նուիրատուութիւն մը՝ ճեմարանի աղքատիկ տղոց գիրքերուն եւ գալրոցական պէտքերուն յատկացուելու համար :

Պահպանիչէն վերջ, նախագահ սրբազոնը համբուրեց ազնիւ նուիրատուին ճակատը, եւ ներկայք իրենց ջերմ շնորհակալութիւններն ըրին անոր :

Լեւոն էֆ. Սէմէրճեան, փառաւոր, անկորնչելի յուշարձան մը կանգնեց իր յաւէտ ողբացեալ տիկնոջ եւ զաւկին: Իցիւ. մեր մեծատուններուն մէջ արթնարձա՛ն՝ նոյնքան ուժգնօրէն եւ գիտակցօրէն՝ ճշմարիտ բարերարութեան ոգին :

Սկիւտարցիներուն կը մնայ անոր չափ գիտակից ոգիով մը ու համերաշխ ջանքերով փայլուն եւ իր արտաքին շքեղանքին համեմատական ընել Սէմէրճեան ճեմարանին ներքին վիճակը, առանց որոյ նսեմացուցած պիտի ըլլային բարերարին ազնիւ նպատակը :

ԶԱՐԾԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ

ՀՈԴԵՒՈՐ ԿԵՍԵՐ

ԹԷ ԻՆՉՊԷՍ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ԵՆՔ ՄԵՐ ՇՆՈՐՀՔՆԵՐԸ

«Բայց ունիմք մեք շնորհս, ըստ շնորհացն որ տուեալ են մեզ ազգս ազգըս» : (Հռովմ. ԺԲ. 6):

«Իւրաքանչիւր ոք որպէս եւ ընկալաւ շնորհս ինչ, ի միմեանս զնոյն մատակարարել իրրեւ զբարւոք հազարակոտս պէտքէս շնորհացն Աստուծոյ» : (Ա. Պետ. Գ. 10):

Աստուած մեծ ծրագիր մը ունի, եւ որովհետեւ այս է իրողութիւնը, ան կ'ուզէ տարբեր տաղանդներով ու մասնայատկութիւններով օժտուած գործիչներ: Եթէ թաղաւորութեան գործերը պիտի կատարուին, մարդաբէնութեւ, օրէնսդիրներու, վարդապետներու արուեստագէտներու, բանաստեղծներու, քաղցրաձայն երգիչներու,

քարոզիչներու, դիւանագէտներու, արհեստաւորի ու գործաւորի, վերջապէս մեծ ու պզտիկ ամէն տեսակ կարողութիւնով էրիկ մարդերու եւ կիներու պէտք կայ: Աշխարհի մէջ Աստուծոյ դատը այն ատեն պիտի շահուի փառաւորապէս, երբ մարդիկ սուր վին թէ իրենց Աստուծոյ ստացած տաղանդներն ու շնորհքները պէտք են գործածել Աստուծոյ փառքին համար: Մէկուն տաղանդը կրնայ խոնարհ ըլլալ բայց պէտք չէ անարգել դայն, այդպիսի մէկը կրնայ զայդ լաւագոյն կերպով գործածել:

Իր ունեցածը լաւագոյն կերպով գործածողն է ամէնէն իմաստուն մարդը. մեր շունեցածներուն զգայութեան վրայ ողբալ յիմարութիւն է, այդ ողբը պակասին տեղը չի լեցներ: Այն ժամերը՝ զորոնք ողբ ու կոծով կ'անցընենք՝ զուր անդ կը վատնենք: Եթէ զանոնք մեր ունեցածը գործածելու, զարգացնելու յատկացնենք՝ յաղթութեան գոռներ պիտի բացուին մեր ոտքերուն առջիւ:

Զարգացումի եւ աճումի միակ օրէնք մը կայ, զոր պէտք չէ անտեսենք. բարձրագոյնին ու լաւագոյնին տանող ճամբան՝ ուրիշներու բոլոր սիրտով ծառայելու ճամբան է: Ամէնս ալ ուրիշներու ծառայութեան գործածելու տաղանդներ ու ձիրքեր ունինք. մենք ամէնս ալ Աստուծոյ բազմապիսի շնորհքներուն տնտեսներն ենք: Մեռեալ հոգիներ կան՝ ինչպէս կան մեռեալ ծովեր, ու այս երկուքին համար ալ պատճառը նոյնն է. անձնամոլութիւնը ինքնակործանում է: Եթէ ամէն բան միայն մեր անձին համար պահելու փնտրակար սովորութիւնը ունինք, մեր գործութեան ու կատարելութեան զէնիթը չենք կրնար հասնիլ: Աշխարհիս ծառայելու համար ապրողներ՝ անմահներ են: Աշխարհէս կարելի եղածին չափ մի միայն իրենց անձին ու հաճոյքներուն համար օգտուելու ջանացողներու անուններն ու յիշատակները կը մոռցուին առ յաւէտ: Այո՛, մենք Աստուծոյ անտեսներն ենք, եթէ մեզի շնորհուած ձիրքերն ու տաղանդները՝ որչափ ալ սովորական ըլլան անոնք՝ չգործածենք անոր թաղաւորութեան յատկացումին համար,

անոնք մեզմէ պիտի առնուին : Մի միայն գործածողն է որ յառաջդիմութեան օրէնքին հետ համընթաց է : Կծծին ու ագահը իրենց հոգիին զէմ կը գործեն :

Եթէ մեր շնորհքներն ու ձիրքերը Աստուծոյ եւ մարդոց ծառայելու համար գործածելու հարկին տակ կը դառնանք, պէտք չէ մոռնանք մեր սովորական կամ ամենօրեայ պարտականութիւնները : Մէկու մը իր սովորական պարտականութիւնները կատարելը կամ չկատարելը խնդիր չէ, որովհետեւ հոգ ընարութիւն իսկ չունի, պէտք է կատարէ : Բայց թէ մէկը հասարակ բաները սովորական թէ մասնաւոր կերպով պիտի կատարէ, սովորական թէ մասնաւոր ողբով մը պիտի դործադրէ, ահա հոս է ընարութիւնը : Վարէն վաղող ջուրին հոսանքէն դարձող անիւներ կան, ինչպէս ինչպէս նաեւ անիւներ՝ որոնք վերէն թափող ջուրի ուժով կը դառնան Ծնորհքը՝ վարէն դարձող կեանքի անիւները վերին զօրութիւնով մը դարձող անիւներու կը փոխէ : Այսպիսի պէտք ունի այնպիսի մարդոց, որոնք իրենց հասարակ, սովորական պարտականութիւնները դործադրելու ատեն մեծ շարժառիթներէ կը մղուին : Այնպիսիներ երկրաւոր ծառայութեան մէջ երկինքէն կ'առաջնորդուին Էմբսըն գեղեցիկ խօսք մը ունի, «Կառքդ տատղի մը լծէ» :

Հաւազոյն է պղտիկ բան մը մեծ կերպով մը ընել, քան թէ մեծ քան մը՝ սլզափի կերպով մը : Աստուած միայն մեծ պարտականութիւններու կատարումին մէջ չէ որ մեզի օգնել խոստացած է, այլ նաեւ փոքր եւ աննշան կարծուածներուն մէջն ալ : Բայց մարդիկ ընդհանրապէս աւելի մեծ բաներու մէջ Աստուծոյ կը վստահին քան պղտիկ բաներու մէջ :

«Իմ շնորհքս բաւական է քեզի», խօսքը կը յամառինք «քեզի բաւական պիտի ըլլայ» կարգալու, եւ պարզամտօրէն կը հաւատանք թէ ապագային յարմարագոյն շնորհքներ պիտի ունենանք, իբր թէ ներկային բան մը ունեցած չըլլայինք : Եւ այս միշտ զէպ ապագան նայելու սովորութիւնը մեր օրուան շնորհքները դործածելու ու

պարտականութիւնները կատարելու մէջ անզգոյշ անտեսումի կը տանի մեզ :

Թերեւս մեզմէ ոչ մէկը, ոչ մէկ տեղ, ոչ մէկ պարագայի տակ Աստուծոյ այնչափ պէտք պիտի ունենայ՝ որչափ ճիշդ հիմա, ուր որ ենք ու ճիշդ այս պարագաներուն տակ : Ներկային պահանջը դերագոյն պահանջն է : Յաճախ կ'ըսենք. — Աստուծոյ համար՝ մեծ բաներ ընելը պղտիկ բաներ ընելու չափ դժուար չէ : Հակառակն ալ ճշմարիտ է : Ուղղամտօրէն կը հաւատամք թէ Աստուծոյ համար դժուար չէ մեր ամենօրեայ հասարակ պարտականութիւններուն մէջ օգնել մեզի՝ քան մեծ գործեր ընել՝ ինչպէս աշխարհ մը ստեղծել, թագաւորութիւն մը կործանել եւ այլն :

Երբ Յիսուս իր աշակերտներուն ըսաւ «Եւ ահա առիկ ես ընդ ձեզ կամ դամենայն աւուրած», դիտէր թէ այդ օրերէն ումանք հասարակ տեղիք, միօրինակ ու սովորական օրեր պիտի ըլլային : Բայց նորէն ան չվարանեցաւ իր աշակերտները ապահովյնել իր ներկայութեան ու շնորհքին մասին, որոնք անոնց հետ պիտի ըլլային սովորական բաներու մէջ իսկ : Եսայի մարդարէ կ'ըսէ. «Բայց Տէրոջը ապաւինողներուն ոյժը պիտի նորոգուի, եւ անոնք արծիւներու պէս թռչելով վեր պիտի ելլեն, պիտի վազեն եւ չթուլնան, պիտի քալեն եւ չյոգնին» (1) : Վերջին խօսքը ամէնէն դժուարն է — քալել ու չյոգնել : Աւելի փորձիչ բան մը չկայ քան սովորական ու հասարակ տեղիք պարտականութիւններու ճամբուն վրայ միօրինակ քալելը : Այո՛, պէտք է այդ պղտիկ բաներու մէջ հաւատարիմ գտնուիլ որ մեր հոգեւոր շնորհքները աճին եւ ունեանան, ու կարենանք լաւագոյն կերպով դործածել զանոնք :

Անսովոր պարտականութիւններու, մասնաւոր գործերու համար Աստուծոյ շնորհք խնդրել բարդատարար դիւրին է : Այդպիսի ժամանակներ մասնաւորապէս պատրաստ

(1) Բայց որ սպասեն Տեառն՝ նորոգեցին զօրութեամբ, նորախեռուր զարդարեցին իբրեւ զարծուխ, ընծապցին եւ մի՛ վատապեցին, գնացեն եւ մի՛ քաղցիցեն» : (Ես. Խ. 31) :

սուռած հողեկան տրամադրութիւն մը կ'ու-
նանք: Անսովոր դրդիւ մը մեր լաւագոյնին
կոչում կ'ընէ: Մեր ամենէն շատ պէտք
ունեցածը սովորական պարտականութիւն-
ներու կատարումին համար պէտք եղած
շնորհքն է, որովհետեւ մեր կեանքին մե-
ծագոյն ու լաւագոյն մասը անոնք կը
գրաւեն:

Շնորհքը խնդրքիւն կ'ենթադրէ. տըր-
տունջով եղած բանի մը մէջ շնորհք
չկայ, պարտականութեան կատարումը
շնորհալի է, երբ բոլոր սիրտով ու լիով
կը կատարենք զայն եւ ուրիշ կնք անոր
համար:

Շնորհքը կ'ենթադրէ նաեւ զեղեցկու-
թիւն ու ներդաշնակութիւն: Բանի մը կոչ-
տարար ու զփոխութեամբ կատարումն
մէջ շնորհք չկայ. մեր պարտականութիւն-
ները չյաջողին իսկ՝ նորէն կրնան շնորհ-
քով կատարուիլ, երբ մենք մեր լաւագոյնը
ընենք՝ սէրը սիրտերուս մէջ եւ ժպիտը
ղէմքերուս վրայ: Պարտականութեան
այսպիսի կատարումը կրնայ արտաքինապէս
չյաջողիլ, բայց կ'ունենայ այն բանը զոր
Աստուած յաջողութիւն կը համարի:

Շնորհքը կ'ենթադրէ նաեւ մեր անձեռն
դուրս եւ մեր ուժերէն վեր բան մը:
Ինչպէս որ Անգլիոյ նոր թագաւորը «Շնոր-
հիւն Աստուծոյ» Անգլիոյ թագաւորը կոչ-
ուեցաւ, մենք ալ մեր պարտականութիւն-
ներուն կոչումն ենք «Շնորհիւն Աստու-
ծոյ»: Երբ Աստուած մեր կեանքերը լեցնէ
իր շնորհքով՝ միայն այն ատեն է որ մեր
պարտականութեանց կատարումը բնորո-
նելի կ'ըլլայ Անոր, եւ օգտակար՝ մեր ըն-
կեր-արարածներուն:

Մեր պարտականութեանց կատարում-
մին մէջ վստահութիւնն ալ շնորհք մըն է,
զոր իւրաքանչիւրս կրնանք ունենալ, հոգ
չէ թէ ո՞րչափ տկար ըլլանք: Եւ պէտք է
ունենանք ալ զայն, որովհետեւ եթէ մենք
Աստուծոյ կամքը կը կատարենք՝ Ան իրոս-
տացած է մեզ իր ոչով վեր բռնել: Վախ-
նալ ուրիշ բան մը չի նշանակեր՝ եթէ ոչ
Աստուծոյ խօսքին ու խոստումին չի վըր-
տահիլ:

Որչափ ալ մեր պարտականութիւնները

այս իմաստով սովորական ըլլան ու յա-
ճախակի՝ այս ողիով կատարուած պար-
տականութիւն մը ոչինչ ու անտեսելի չի
կրնար ըլլալ: Բրիստոսի սիրոյն կատար-
ուած պարտականութիւն մը, որչափ ալ
խոնարհ ու միօրինակ ըլլայ, անոր փառա-
ւոր ներկայութեան փառքով կը փայլի,
ու անոր սիրոյն զարմանալիքներով կը
ճոխանայ:

Հետեւեալը չմոռնանք թէ՛ Ա. Մենք
տնտեսներ ենք մեր հոգեւոր շնորհքները
զարգացնելու եւ լաւագոյնս դորձակու
համար. Բ. Մեր սովորական պարտակա-
նութիւններուն կատարումին համար ալ
Աստուծոյ շնորհքին պէտք ունինք, ու այդ
մշտապէս կը տրուի մագի՝ եթէ խնդրենք.
Գ. Շնորհքը՝ խնդութիւն, գեղեցկութիւն,
ներդաշնակութիւն, վստահութիւն կ'են-
թադրէ. առանց առանց, որ շնորհքներ են,
շնորհազուրկ կերպով կատարուած կ'ըլլան
մեր պարտականութիւնները թէ՛ սովորա-
կան ըլլան անոնք թէ՛ բացառիկ:

Թրդմ. ԳՐԻԳՈՐԻՍ

ՍԻՒՆԵԱՅ ԴՊՐՈՅԸ

Բ.

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՍԻՒՆԵԱՅ

Ըստ աւանդութեան Մովսէս Խորե-
նացոյ եւ Սահիանոս Օրբէլեանի, քրիս-
տոնէական հաւատքի լոյսը շատ կանուխ
ծագեցաւ Սիւնեաց աշխարհին մէջ, գէթ
հարաւի կողմերը, որովհետեւ Հայոց Առաք-
եալներէն Ս. Բարթողիմէոս Պարսկաստանէ
զարձին Ատրպատականի ճամբով կ'անցնի
Երասխ գետէն ու կը մտնէ իր աշակերա-
ներով «ի սահման Սիւսականու», եւ կը
սկսի Աւետարանի քարոզութեան «յՈՐՈՎ-
վատ գետը եւ յԱրեւիս գաւառ եւ ի տունն
Բաղայ եւ ի Դողթն», Առաքեալը առաջին
եկեղեցին կառուցանելով ի Դողթն, կը
կոչէ զայն Տիւղթնիցաւ, ուր կը մկրտէ
գուաւոր իշխանական սուրն եւ ժողո-
վուրդէն շատերը: Ապա այդ նորոգ հաւա-

տայեալներուն Հոգեւոր տեսուչ կը կարգէ իր աշակերտներէն Կուսման, եպիսկոպոս ձեռնադրելով, թէեւ կը պակսին մեղի յաջորդ եպիսկոպոսներուն տնօրէնները, սակայն Բարթողիմէոս Առաքեալէն հաստատուած Աթոռն իր ղեկավարները կը պահէ մինչեւ Ս. Գրիգոր Լուսաւորչի միջոցաւ Հայոց երկրորդ լուսաւորութեան ժամանակը, քանի որ յաջորդութեան խնդրոյն մէջ փնտռելու միակ կարեւորագոյն կէտը հաստատուած Աթոռոյ մը անխախտ շարունակութիւնն է, եւ պատահական որոպոյթիւններ երբեք չեն յետեւեր Աթոռոյն գոյութեանը։ Երբորդ դարում Մեհրուժան Հայրապետին գոյութիւնը, որ բնակատեղի տեղի չի տար, — քանի որ Աղեքսանդրիոյ Դիոնիսիոս հայրապետը թուղթ մը ղրկած է Անուր—, ինքնին արդէն կ'երաշխաւորէ յաջորդութեան շարունակութիւնը, հետեւաբար նաեւ առաքելահիմն Աթոռոյն խափանումէ դերծ մնալը։

Գրիգոր Լուսաւորիչ՝ Սիւնեաց իշխանին խնդրանաց համաձայն՝ Առաջնորդ կը կարգէ նախ Ասորի մը, եւ ապա իր աշակերտներէն «այր ճշմարիտ եւ լաւ, լի ամենայն հմտութեամբ, երիտասարդ հասակաւ» Գրիգորիսը Վաղարշապատու մէջ եպիսկոպոս ձեռնադրելով կը յղէ Սիւնեաց երկիրը, ուր «մեծաւ ջանիւ հաստատէր ի հաւատոս զնորածին քրիստոնեայսն, ո'չ դադարելով յուսուցանելոյ զճշմարիտ վարդապետութիւն Սրբոյ Աւետարանին»(1)։

Պատմիչին այս ատգերէն աջնպէս կ'երևի թէ Գրիգորի գաւառի մէջ արդէն հաստատուած Աթոռը միայն ուրեք ուրեք կրցաւ տարածել քրիստոնէութիւնը, եւ երկրին մեծագոյն մասին միջ դեռ կանգուն կը մնային կուսքերու մեհեանները։ Գրիգորիսի յաջորդող եպիսկոպոսներն ալ մինչեւ ցԱ. նախիա, որ Ս. Սահակէն կը հաստատուի, յիշատակուած չեն պատմութեան մէջ, եւ նոյն իսկ եղած է ժամանակ ուր այդ աշխարհը մնաց առանց հոգեւոր պետի, ինչ-

պէս կը յիշէ Օրբէլեան, մինչեւ որ Ս. Մեսրոպի աշակերտ Անանիա եպիսկոպոսն եկաւ։ Սիւնեաց Աթոռակալը՝ երեսուն եւ վեց եպիսկոպոսներու կարգին մէջ հաստատուեալ էր Լուսաւորչէն՝ նստիլ աջակողման հոթներորդ աթոռը, բայց յետոյ ապա աւելի յառաջացաւ պատուով ու բարձր։

Սիւնեաց եպիսկոպոսն իր իշխանութեան ներքեւ ունէր քորեպիսկոպոսներ, միայն Ժ.Գ. դարում Նորավանից շինութեանէն վերջը հոն նստաւ եպիսկոպոս մը անկախ, եւ այսու հոգեւոր ընդհանուր տեսչութիւնը երկուքի բաժնուած եղաւ։ մինչեւ Ստեփաննոս եպիսկոպոս Օրբէլեանի ժամանակ, որ յաջորդեցաւ երկու աթոռները միայնել եւ ինքը նստաւ մերթ Տաթևու վանքն ու մերթ Նորավանքը։ Միապետ եպիսկոպոսները կը կոչուէին Մեսրապոյիս եւ կը վայելէին նախագահութեան պատիւ, այնպէս որ Ընդհանրական կաթողիկոսէն յետոյ կուգար անմիջապէս Սիւնեաց Մեարապոյիսը, որ արածնուած էր նաեւ առաջին տանելու «ղխաչն եւ զգաւազանն ոսկեթել» (Օրբ. ԾԲ.)։ Այս առանձնաշնորհալ պատիւը, սակայն, մեր Կաթողիկոսներու կողմէ երբեմն ետ առնուեցաւ Սիւնեաց միապետ եպիսկոպոսներէն, երբ ասոնք սկսան անհնազանդութիւն ցոյց տալ Հայրապետական Աթոռին, եւ Ս. Միւսոնն ու ձեռնադրութիւնը Ս. Ընդհանրական տնօրէն(1), բայց քիչ ժամանակէն Սիւնեցիք վերստին արժանացան այդ առանձնաշնորհման, առ Կաթողիկոսն հնազանդութեան զառնալով։ Սիւ Լեւոն Ժողովը՝ (1114) Գրիգոր Գ. Պահլաւունիի օրով՝ որոշեց հայրապետական ընտրութիւններու ատեն զխաւոր չորս աթոռներու՝ Բջնոյ, Հաղբատայ, Արտազու եւ Տաթևու։ հաւանութիւնն ալ առնուլ անպատճառ։ Սիւնեաց եպիսկոպոսական յաջորդութիւնը շարունակեց մինչեւ ԺԹ. դարու երկրորդ քառորդին կէսը (1837), ապա Տաթևեան աթոռն հիւղեցականապէս եւ թարկուեցաւ Երևանու Հայոց հոգեւոր իշխանութեան, եւ անկէ ի վեր կ'ունենայ սոսկ փոխանորդ եկեղեցական մը։

ԳՆԷԼ Ծ. Վ. ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ

Գաւթ գիւղ

(1) Ըստ Օրբէլեանի պատմութեան, այս Գրիգորիս ընկերակցութեամբ Սիւնեաց Անդովի իշխանին ղնաց Վեսարիս, Մեծին Ներսէսի ձեռնադրութեան ատեն։ (Օրբ. Է.)

(1) Սիւնեաց քաղաքական իշխանութեան պէս կրօնականն ալ կարծես արդող բնութիւն մը առաւ, ինչ զիրք որ բունց Սիւնեաց նախարարութիւնը Հայոց արքունիքին դէմ, նոյն զիրքը ունեցաւ իրենց Մեարապոյտութիւնն Հայոց կանոնակալութեան հանդէպ։

ԿԵԱՆՔԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ



տածկոտ հոգիս դեռ կը դեղեւկայ
Լուծելու անվերջ խոհերը անշունջ։

Իրկունն է իջած, երկինք կը խոկայ,
Հովիկն ալ ջուսի երգեր քաղցրաշունջ։

Ո՛հ, կ'ուզեմ գտնել գաղտնիքը կեանքին,
Դեռ մէկիկ մէկիկ չմեռած յոյսերս,
Երգ մ'ունի հոգիս լոյսին ու ծաղիկին,
Մրմունջն ալեւկին կը պատմէ իղծերս։

Կ'անցնի կեանքն ինչպէս ստուերն իրկուան,
Թողով քերթողին սարսուռը մութին,
Որ կ'երագէ միշտ խորը անդունդին։

Ո՛վ, դժնէ պատրանք, ու վախը մահուան
Գաղտնիքն էք կեանքին, խոհեր պարզուած,
Դուք լացը սրտիս ու հոգւոյս քերթուած։

Դ. ԳՐԻՎԱՆՔՅԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՏԱՄՆԵՐԿՈՒ ՄԱՐԳԱՐԷԻՑ

Ա Մ Ո Վ Ս (1)

Ամովս եւ իր ժամանակը. — Խմբագրութեան
Թուականը. — Բովանդակութիւնը. — Եր-
կու իշխանութիւններ. — Ոճը։

Մարգարէները շատ ազէկ կը հասկնա-
յին, կը զգային թէ զէպի ո՛ւր կը գիւմէ
Իսրայէլը՝ Իրենց հեազհեաէ բարձրացող
ըմբռնումին ու Իսրայէլի միշտ զէպի ան-
կում առաջնորդուած քայլերուն միջեւ
բացուած բաժանման խորոցը երթալով կը
լայննար, կը խորունկնար, կ'ընդարձա-
կէր։ Իսրայէլ քաղաքական յաջողութիւն-
ներ ունեցած էր ու կ'ունենար։ Նւ սո-
կայն, այդ յաջողութիւնները ոչ թէ իր
բարձրացումին, այլ կրօնապէս ու բարոյա-
պէս ստորնացումին պատճառ կ'ըլլային։
Ձեռք բերուած երկիրները նորանոր դա-
ճեր, հարստութիւններ կը լեցնէին Եփրատի
որդոցը գոգը. բայց այդ հարստութիւն-
ները մեղկութեան, ցոփութեան ու չափա-

խնդրութեան կ'առաջնորդէին զանոնք։
Երկրին հարստ պատակարգը, դամասկեան
պատատալի մարներու եւ փափուկ բաղ-
մայներու վրայ ընկող մահած(1), թշուառն
ու անօգնականը զրկելու խորհուրդներ
կ'երկնէր։

«Ամազլուսը, զաղարի օրերը կ'ըր-
պիտի անցնին որ մեր ցորենները ծախենք,
կը խորհէին անոնք, եւ չարաթը կ'ըր պի-
տի անցնի որ մեր շաւմարանները բանանք,
արդուն՝ մեր չափը փոքրցնենք, ուսիկդ՝
մեր զինները բարձրացնենք, մեր կշիռները
խարդախենք ու աղքատներն արծաթով
գնենք, եւ մեր ցորեններուն աւուրը վա-
ճառենք(2)»։

Պերճանքը, հարստութեան անբաժան
ընկերն է շատ անգամ. զեղխութիւնը,
չոսյութիւնը բոյն դրած էին Սամարիոյ
ըլուրներուն վրայ, Չէ՛ մի որ յաճախ զըր-
կումի եւ թշուառութեան պատճառ է
պերճանքը, Մարգարէները, որոնք արդա-
րութեան դադարիւրին նուիրուածներն էին
հողութեան մէջ, չէին կրնար, ուրեմն, իրենց
ճայնը չբարձրացնել այդ չափազանցու-
թիւններուն դէմ։ Ի՛նչ բուն ու սաստիկ
լեզու մը կը գործածէ Ամովս, Սամարիոյ
կիներուն հասցէին «Բասանու երինջներ»
կը կոչէ զանոնք, որոնք չոսյութեան,
պերճանքի անձնատուր, «մեզի ուսելիք,
խմելիք բերէք որ վայելենք, զիրանք», կը
ճայնէին իրենց էրկիներուն(3), եւ իրենց
այդ մարմնաւէր՝ ցոփ ու չոսյ կեանքով
գլխաւոր պատճառները կ'ըլլային թշուա-
ռին ու աղքատին կեղեքումին։

Ի զուր Եսայիէն պատիմներ, ազէաներ
կը տեղադր անոնց զլխուն. իրենց ուղղու-
թեան սիրահարները կը մնան անոնք
Անոնց «տկոտներուն մաքրութիւն»՝ սով
կուտայ Ան(4), բայց դարձեալ չեն դառ-
նար անոր Գարնանային բարերար անձրեւ-
ները կ'արգիլէ Ան, քաղքի մը վրայ կ'անձ-
րեւէ եւ ուրիշ քաղքի մը վրայ չի տեղար,
անդառտան մը կ'ստոգէ եւ ուրիշ մը ան-

(1) Ամովս Գ. 12, 2. 4—5։

(2) Ամովս Բ. 5, 6։

(3) Ամովս. Գ. 1

(4) Ամովս. Գ. 6

(1) Շար. 31րդ Թիւէն եւ վերջ։

անձրեւ կը ցամքեցնէ, խորշակահար կ'ընէ զանոնք ու զալուկը կը սփռէ անոնց երես- ներուն վրայ, մարախ կը զրկէ անոնց, որ պարտէզներն ու այգիները, թղենիներն ու ձիթենիները կը լափէ, ժանտամահ կը զըր- կէ անոնց վրայ, անոնց քաղաքներէն շա- տերը կը կործանէ, գիրի կը վարէ զանոնք, բնական պատուհասներ, հրկիզումներ կը զըրկէ անոնց(1), եւ սակայն ոչ ոք կը խորհի Եանվէին դառնալ:

Իսրայէլ ոչ միայն չուղեր այս բնական աղէտներուն մէջ Եանվէի բարկութիւնը տեսնել, այլ եւ իր բոլոր յաջողութիւնները իր ոյժին ու ջանքերուն կը վերադրէ միայն(2):

Եւ սակայն Եանվէն անկարող էակ մը չէ, Բազմաստեղի ու Հայկի արարիչն է Ան, որ կրնայ ցերեկը դիշերուն փոխել, ծովուն ջուրերը կոչել ու երկրի վրայ զե- ղուլ(3), որ երկրի բարձունքներուն վրայ կը թեւածէ, եւ կրնայ արշալոյսը խաւարի փոխել(4): Ամպերու գոռումները Անոր ձայնն են, տիւրի մանչիւնին պէս անկը ու պակուցիչ(5): Զօրութեանց Տէրը, Տէր Սարաուլթ է Անոր անունը(6): Զօրաւոր, արդար է Ան եւ վրէժխնդիր: Իսրայէլ չպիտի կրնայ աղատիլ անոր բարկութենէն:

• Զոր օրինակ Թէ կարացէ Թափել հովիտի ի րեանայ առիծու:

Աքեացս երկուս կամ բլեակ մի ունկան, Այնպէս գերծցլին օրդիքն Խարալիլ(7):

Ոչ ոք պիտի կրնայ փախչիլ անոր առ- ջեւէն, զօրաւորը պիտի լքուի, աղեղնաւորը պիտի չկրնայ ոտքի կենալ, արաղընթացը պիտի չկրնայ քայլ մ'իսկ առնել, հեծեալը պիտի չկրնայ իր տնձը աղատել, եւ ամե- նէն քաջասիրտը մերկ պիտի փախչի(8):

• Զոր օրինակ Թէ փախիցէ մարդ լերեսաց առիծու:

Եւ պատահեցէ նմա արջ,

Եւ փախնուցու ի տուն,
Եւ յեցուաց զձեռս իւր յօրմն,
Եւ հարկանիցէ զնա օծ(1):

Անձրեւէն փախչողը կարկուտի պիտի պիտի բռնուի: Ազատու մ'չկայ:

Քանի որ չեն ուղեր մարգարէներուն լսել, որոնք Եանվէի դաղանի խորհուրդնե- րը կ'իմանան ու կը յայտնեն(2), Աստու- ծոյ խորհուրդներէն, խօսքերէն, պատգա- մներէն պիտի զրկուին անոնք(3): Եւ քանի որ իրենց զօրութեան վրայ կը յաւորտան, պիտի ջախջախուի իրենց խշկանութիւնը, դերի պիտի քչուին Դամասկոսէն ալ ան- ղին(4): Իրենց պալատներն ու սեղանները հարթ հաւասար պիտի ըլլան եւ բնակչու- թիւնը սրով պիտի կոտորուի(5):

Եւ սակայն, իր բոլոր գործերուն մէջ, անիրաւ չէ Եանվէն Հայրերուն անօրէնու- թիւնը իր օրդուցը վրայ չպիտի քաւէ ան- չուշտ, եւ ոչ ալ Իսրայէլի յանցանքը Յու- ղայի օրդիներուն վրայ: Յակոբի տունը բոլորովին պիտի չջնջէ, ուրիմն(6): Մեղա-ւորները պիտի թափին Աստուծոյ բարկու- թեան հոսիքէն, բայց Դաւթի տունը, ին- կած՝ խորտակուած խշկանութիւնը պիտի կանգնի, եւ երկիրը պիտի վայելէ(7):

Այս է անա Ամովսի ժամանակի հայե- լին, ու անոր մարգարէութեան բովանդա- կութիւնը: Այս է անոր ուղղութիւնն ու իտէալը: Բարձր է անոր բարոյական մա- կարդակը իր ժամանակակիցներէն: Բարձր է անոր տեսչը, ձգտումը: Արդարութեան՝ եթէ ոչ սիրոյ՝ գրոչին զինուորն է ան: Իսրայէլի մարգարէութեան բարձրագոյն ձգտումներուն ծանօթ մը եւ հետեւող մը քայլ մըն ալ ինքը կ'առնէ Եանվէի պաշ- տամունքին նախանձախնդրութեանը մէջ:

Իր ոճը, թէեւ չի հաւասարիր Եսայիի, Յովէլի, բայց մշակուած գրչի մը արդիւն- քն է, ինչպէս իր գաղափարները մշակ-

(1) Ամովս. է. 1, 2: Դ. 7—10, է. 4: Դ. 11

(2) Ամովս. Բ. 9—11, Զ. 14

(3) Ամովս. Ե. 8,

(4) Դ. 13

(5) Ա. 2. Դ. 8.

(6) Դ. 13

(7) Դ. 12

(8) Բ. 14—16

(1) Ամովս. Ե. 19

(2) Դ. 7

(3) Ը. 11—12

(4) Ե. 27, Զ. 15, է. 17

(5) Թ. 1, 4:

(6) Թ. 8

(7) Թ. 9—15:

ուած մաքի մը արդասիքն են : Յարտնի է թէ իր հովուական ցուպին չափ լաւ սորված է շարժել զրիչը : Իր հովուական կեանքը շատ անգամներ առիթը կ'ընծայէ ա՛նոր՝ դաշտի եւ հօտերու պատկերներով զարգարելու համար իր գր. ւածքը(1) : Խըրթին, միթին է ինչ ինչ կէտերու մէջ. բայց ուշադիր ընթերցում մը շուտով կը թափանցէ անոր ոգւոյն ու նպատակին : Ո՞վ գիտէ, թերեւս աւելի լուսատ որ ու յատակ երեւնային անոնք, եթէ անոր մէջէն կտրուած ընդհատներուն մասերն(2) ալ ունենայինք մեր ձեռքը :

Ինչ որ ալ ըլլայ, մակայն, իբրեւ մատենադիր, անոր արժէքը, պէտք է ողջունել Ամովսի մէջ (Ն. Ք.) ութերորդ դարու մարգարէական ատենէն կարկառուն դէմբերէն մին :

ԳԷՈՐԳ-ՄԵՍՐՈՊ

(1) Ա. 13, 2. 13, Ը. 2. Թ. 9, 13—15, Ե. 19. Ա. 9: Գ. 4, 5, 12:

(2) Ե. 7—8, 26—27

ՀՈԳԻՆ ԳՈՅՈՒԹԻՆՆ ԵՒ ԱՆՄԱՀՈՒԹԻՆՆԸ

ՀՈԳԵՊԱՇՏՈՒԹԻՆ ԵՒ ՆԻՅԱՊԱՇՏՈՒԹԻՆ

ԴԷՄ ԴԻՄԱՅ (1)

Ս.

Ի՞նչ պիտի ըլլայ մեր վախճանը. — Ապագայ կեանքի հարցը. — Եսկը անցնելի է. — Անձը չի կրնար անհետիլ :

Երբորդ, այս կարգի փաստերուն տալու համար այն ամէն ուժգնութիւնն որուն անոնք ընդունակ են եւ զորս անոնք ունին ի բնուստ, պէտք պիտի ըլլայ ուղղակի նկատել անձին գերազանցութիւնը, եւ նոյն գերազանցութեան մէջ իսկ տեսնել իր տեւականութեան ճշմարիտ յատկանիշը : Կ'ըսենք. եթէ ոչինչ չի կորսուիր, ա՛լ աւելի գերազանց սրտառումով անմահ են գիտակցութիւնն ու ազատ կամ-

քը : Անհեթեթ չի՞ պիտի ըլլար որ կ'չտեւ անգործ հիւլէն ապահովուած ըլլար տեւականութեամբ, եւ բանականութեամբ, գործով ու բարոյական կորովով օժտուած էակը դատապարտուէր անէացման : Ինչ որ կը ճանչնանք թէ ամենէն կատարելագոյնն է եւ արժանի ապրելու, չի կրնար մեռնիլ երբէք : Նա որ անգամ մը ինքզինքին գիտակցութիւնը ստացած է այս տիեզերքը բաղկացնող կոյր ու ժերուն միջեւ՝ որպէս իմացական եւ ինքնավար ուժ, որ բարձրացած է բարոյական անձնաւորութեան արժանիքին, քննութեան տուած է իր ճակատագիրը եւ ինքզինք կը զգայ պատասխանատու, — նա իրաւունք կուտայ իրեն յաւերժանալու կեանքին եւ զործուէութեան մէջ : Էակը կրնայ ըմբռնուիլ միայն որպէս յատուկ իր կնիքովուած ձեւափոխութիւններուն տակ : աւելի զօրաւոր պատճառով մը պէտք է այնպէս ընդունիլ անձը՝ որ նախապրոթիպն (prototype) է այդ էակին, որ բոլորովին աէր է իր ինքնութեան, այն անձը՝ զոր կ'արտայայտեն եւ կը պատրաստեն ստորագոյն գոյացութիւնները՝ որպէս մէյմէկ նախադէր :
* * Անոնք հիմա ալ հոգեբանական ապացոյցները :

Հոգեբանական ապացոյցները կը հանուին մեր երեք կարողութիւններու՝ զգայնականութեան, իմացականութեան եւ կամքի բնութիւնէն, որոնց իւրաքանչիւրը կը բաղձայ ներկայ կեանքէն լաւագոյն կեանքի մը : Ո՛ւր պիտի ըլլար այդ բաղձանքներուն բանաւորութիւնը, եթէ անոնք հրապոյր մը միայն ըլլային : Ինչո՞ւ բոլոր էակներուն մէջ միայն մեզի պիտի տրուած ըլլային անոնք, ի՞նչ ողբալի առանձնաշնորհ :

Ինչ բանի կը ձկտի մեր զգայնականութիւնը :

— Մեր զգայնականութիւնը կը ձկտի կատարեալ եւ բացարձակ երջանկութեան : Ան ծարաւի է երջանկութեան, եւ ինչ որ կը վայելէ ներկայ կեանքին մէջ, միշտ անբաւական, մանաւանդ անդ աւականորէն անխառն կը գտնէ : Մեր բոլոր հակամի-

(1) Շար. նախորդ Թիւէն եւ վերջ :

տութիւնները, մանաւանդ լաւագոյնները կը ձկտին անսահմանին, այս կեանքին մէջ անոնք հազիւ ուրեմն բաւարարութիւն կը գտնեն, եւ ա՛յն՝ իրաւափութեւ, սակաւօրեայ եւ անկատար կերպով մը. կա՛մ ճակատագրին մի անգութ հեղնանքն է աս եւ կամ կա՛յ հոն վարձատրութիւն մը եւ գոգցեա խոստում մը անմահականութեան:

Հասցա մեր իմացականութիւնը:

— Մեր իմացականութիւնը կը բաղձայ ճշմարտութեան: Սակայն այս աշխարհի մէջ, մեր բոլոր գիտութիւնը կ'ամփոփէ միայն (եւ մ'ըջափ քիչ) մեր ազիւտութեան սահմանները. անձանքը կը չըջապատէ մեզ ամէն կողմէ, մարդ որքան բան գիտնայ, այնքան աւելի կ'ըմբռնէ թէ բան չի գիտեր: Եթէ անոնք բացարձակապէս ընդունայն ըլլային, միթէ մեր կեանքը այսպէս խաղալիկ սխտի դառնա՞ր այս անյաղ հետաքրքրութիւններուն, այս գիտնալու փորձութիւններուն: Ի՞նչպէս չլուսալ մեր իմացականութեան վերջի ճակատագրի մը, ա՛ւելի ճանչնալու եւ մեզ զբաղեցնող մեծ խնդիրներու լսածունն ունենալու հեռապատկերովն ու ստուգութեամբ: Այդ յոյսերը, այդ ակնկալութիւնները արդարեւ մեր բանականութեան համար աւելի՛ հաւանական եւ աւելի՛ բաւարար ըմբռնում մըն են, քան սպասում մը գուտ եւ սարդ անէացումին հոգիի մը համար, որ կըրցած է երբեմն ընդհանարեւ եւ րոբոշխնել ճշմարտութիւնը:

Իսկ դալով մեր կ'ամփոփեն:

— Մեր կամքը կը ցանկայ բարիին, եւ զինք պարտաւոր կը զգայ զայն կատարելու: Փանփնեք սակայն կը մեռնին կ'երթան առանց գործադրած ըլլալու. այն առաքինութիւնները զորս իրենք իսկ պարտաւորիչ կը յայտարարեն: Ո՛րքան սուրբինակ պիտի ըլլար ուրեմն մեր ճակատագիրը, եթէ մեր ներկայ կեանքը միակն ըլլար: Այս կեանքը կերպով մը անիմաստ պիտի ըլլար, վասն զի մարդոց անհուն մեծամասնութիւնը պիտի թերանար անոր նպատակին մէջ:

* Վերջապէս աւննէք բարոյագիտական ապացոյցները:

— Մենք եղած ենք բարոյականութեան համար: մեր ճակատագիրն է կամ մենալ բարին եւ զայն կատարել ազատութիւն: Առ այս մենք զմեզ պարտաւորուած կը ճանչնանք, եւ մինչ կարելի է կատարել միւս բոլոր զաղափարներու արմէքին վրայ, պարտաւորութեան զաղափարը կը ներկայանայ որպէս բացարձակ, այսինքն վեր ամէն վիճաբանութիւնէ: Այս բարոյագիտական ճակատագիրը՝ այս կերպով ընդհանրուած՝ հաւատալի է թէ պիտի գործադրուի, թէ գոնէ ժամանակ պիտի արուի մեզի զայն գործադրելու: Մեր ներկայ կեանքը ոչ ինչ է, բաղդատմամբ այն ամբողջական կեանքին որուն կոչուած ենք: Ներկայ կեանքը սկզբնաւորութիւն մըն է լոկ, ան պիտի ունենայ իր շարունակութիւնը. ատոր չի տարակուսինք բնաւ: Վասն զի, կասկածիլ բարոյականէն, ըմբռնել իր պարտաւորութիւնները, փորձել պահ մը իրագործելու բարին, եւ յետոյ յանկարծ ինչալ անէութեան մէջ, սա պիտի ըլլար արդարեւ հեղուկան ու հակասական ճակատագիր մը: Հաւատալ թէ ոչպիտի ճակատագիր մը մերն է, ա՛յդ տեսակ մը ամբարշտութիւն է, վասն զի ասիկա յայտարարել է թէ աշխարհ ձգուած է դիպուածին ձեռք, եւ թէ ինչ որ պարտի ըլլալ չպիտի ըլլայ բնաւ:

Երկրորդ՝ արդարութիւնը կը գործադրենք այս կեանքին մէջ անհաւատար կերպով: Պէտք չէ՞ որ առանց անհեթեթութեան, մենք դատուինք մեր գործերուն համեմատ: Մենք սամեքս ալ առաւել կամ նուազ կը թերանանք մեր պարտաւորութիւններուն մէջ, սակայն ոմանք դէպի այն դերմարդկային ճիգեր կը թափեն, արդեօք անոնք բացարձակապէս պիտի դատուին ճիշտ անո՞նց նման, որոնք այդ պարտաւորութիւնները կը ծաղրեն, զանոնք դանց կ'ընեն եւ կամ ամբողջովին կը մոռնան: Հաստատական պատասխան ալ եւ հաւանիլ ատոր, ամենէն ամբարիշտ հաւատքն ունեցած ըլլալը խոստովանիլ եւ բարոյականութիւնը լոկ պատահալ մ'է յայտարարել պիտի ըլլար:

Այստե՛սանդերձ պէտք չէ ըսել թէ առաջինութիւնը իրաւունք ունի վարձատրութիւն մը : Երես դոնէիկ եղանակ մըն է՝ ըստ Քանդի՝ այս գերազանց ճշմարտութիւնները իր անձին վրայ ցուցադրելը : Աւելի ազնիւ , աւելի դիւցազնական եւ հետեւաբար տւելի զնահատելի է գործել առաքինութիւնը նոյն իսկ առաքինութեան համար , առանց հաշուելու , առանց բան մը ակնկալելու անկէ , կատարել պարտականութիւնը՝ վասն զի պարտականութիւն է : Առաքինի ըլլալով , մեր պարտաւորութիւնները յիշելն կատարելով , մեր իսկ կատարելութեան համար աշխատած կ'ըլլանք . ահա այդ կատարելութիւնը նկատենք իբր մեր վարձատրութիւնը : Ժշմարիտ առաքինութիւնը անշահախնդիր է : Պէտք չէ ուրեմն դժգոհութիւն յայտնել այն պարագային համար , երբ կատարած ըլլալով մեր պարտականութիւնը , չպիտի կրնանք ոեւէ վարձատրութեան արժանանալ : Վասն զի մեզի պիտի մնայ տակաւին բարին կատարած ըլլալու դո՛հունակութիւնը , եւ իւրաքանչիւր ոք պէտք է ասիկա բուսական համարի իր կատարած գործին համեմատ :

Սակայն կարելի՞ է միթէ չսպասել եւ չցանկալ լաւագոյն կեանքի մը , անոնց համար մանաւանդ որոնք մեզմէ անհունօրէն աւելի արժանիք ունին եւ որոնք կը տեղնենք որ կը տառապին : Կարելի՞ է միթէ չհաւատալ թէ ապագային դարմանում մը պիտի ըլլայ ճակատագրի տնարդարութիւններուն : Այո՛ , հաւատա՛նք անոր : Ուրիշներուն արդար վարձատրութեան համար , որ նոյն իսկ մեզի համար ալ է : Հաւա՛տք ունենանք բարոյականութեան , հաւա՛տք ունենանք իրերու բանաւոր կազմակերպութեան վրայ : Ո՛րքան որ մարդ ըլլայ ինչ որ պարտի ըլլալ տանք ան աւելի պիտի ճանչնայ բարոյական անձին անսահմանօրէն յստեղծանալու իրաւունքը :

Քանի միւս կողմէ չըսել թէ ինչ պիտի ըլլայ ապագայ կեանքը : Նա հակամէտ է ընդունելու գոյութիւններու անսահման չարունակութիւն մը , որուն մէջ

հոգին տակաւ առ տակաւ զտուելով , պիտի հետնի առաիճանաբար բացարձակ բարին :

« Եզրակացութիւն , — Այս գերագոյն հարցերը չեն վերցնելու բնաւ ճշգրիտ լուծումներ , ո՛չ ալ չափադիտական ստուգութիւն : Հա՛րկ է որ անոր համար գանդատինք , — ընդհակառակն : Կորովի ապացուցում մը բաղձալի չէ բնաւ , եթէ կարելի չէ ան . իրականութեան մէջ հսկասական պիտի ըլլար ան , վասն զի այն օրէն որ այդպիսի կորովի ապացուցում մը կատարուէր , ամբողջ բարոյական կեանքը պիտի փոխէր իր նկարագիրը , կամ մանաւանդ պիտի ջնջուէր : Բարիքը , իր հընարաւորութեան , իր վերջնական յաղթանակին դաւանանքը՝ իրականութիւն է , եւ պիտի մնայ միշտ բարի կամեցողութեան գործը : Եթէ ասիկա ապացուցուէր երկրաչափօրէն , չարոյականութիւնը պիտի նկատուէր իբր հայեցողութիւն մը (théorème), առաքինութիւնը բոլորորովին առատացած՝ պիտի կորսնցնէր իր արժէքն ու անունը , եւ մոլութիւնը պիտի ըլլար տգամաբանական անհեթեթութիւն մը :

Լաւագոյն ու հարկաւոր է սերեմն որ անստուգութիւններ կենան վերջին հարցերուն վրայ : Մեզի կը վիճակի ուրեմն բարձրացնել այս անստուգութիւնները , բանաւոր հաւատքի եւ բարի կամեցողութեան դրժով մը որ է գերազանցօրէն ազատութեան գործը եւ որ կը պահանջուի մեզմէ ամէն բանէ առաջ , որպէս առաջին եւ վերջին պայմանը բարոյականութեան :

Թարգմ. Գ. Մ. ԷՕԼՄԷՁԵԱՆ

ԳՈՀԱՐ ԽՕՍՔԵՐ

Զոհողութիւնը սիրոյ չափանիշն է :

« Ով որ թելութեանէ զերծ բարեկամ մը կը փնտռէ , առանց բարեկամի միալու վաճառելի կ'ենթարկուի :

« Քաղաքավարութիւնն իր արծաթ բանալիով կը բանայ այն գոռները , զորս հարստութեան օսկի բանալին իսկ չպիտի յաջողէր բանալ :

ՊԱՄՓԻԼԻՈՍ ԵՒ ՅՈՒԼԻՈՍ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ(1)

Ձ.

— Շատ լաւ, ըսաւ Յուլիոս, բայց ինչո՞ւ կը մերժէք ունկնդրիլ եւ ուսումնասիրել այն իմաստուն դասերը զորս մարդկութիւնը ձեզի կը ներկայացնէ զարեւելի ի վեր: Ինչո՞ւ ատոնցմէ երես կը դարձնէք, եւ ականջ կուտաք միայն ձեր Վարդապետին, խաչուածին: Իր հրամաններուն կոյր հպատակութիւնն է որ ամենայն աւելի կը մոլորեցնէ զձեզ:

— Գուք ալ կը խաբուիք ճիշտ անոնց նման որոնք կ'երեւակայեն թէ Վարդապետին ուսուցումներուն կը հետեւինք ու կը հաւատանք այն պատճառով միայն որ մեր բողոքածակ վստահութիւնը գրաւող Անձը հրամայած է հաւատալ իր խօսքերուն: Ընդհակառակն, ամէն անոնք որ անկեղծ սրտով կը փնտռեն ճշմարտութիւնը՝ Աստուծայ հետ հաղորդակցելու համար, բոլոր անոնք որ ճշմարտ երջանկութեան կը բաղձան, ակամայ եւ անպիտակցօրէն կը հետեւին Քրիստոսի գծած շաւղին, բնագլխաբար Վարդապետին ետին տեղ կը դրաւեն, եւ յետոյ շուտով կը նշմարեն թէ անկէ՞ կ'առաջնորդուին: Անիկա Աստուծոյ Որդին է, Միջնորդը Աստուծոյ եւ մտքոց միջեւ: Ասոր կուրաբար չենք հաւատար այս կամ այն անձը ըսած ըլլալուն համար, այլ գիտակից ենք ատոր ճշմարտութեան, որովհետեւ ամէն անոնք որ զԱստուծոյ կը փնտռեն, իրենց առջին կը գտնեն Որդին Աստուծոյ, եւ անոր միջոցով միայն կարելի է տեսնել, ըմբռնել եւ ճանչնալ Հայր Աստուծոյ:

Յուլիոս չպատասխանեց, երկու բառիկամներն երկար ատեն լսու մնացին:

— Երջանիկ ես, հարցուց վերջապէս Պամփիլիոս:

— Բաղձաւորս է միայն միշտ մնալ դանդաղ լինելու մէջ: Եթէ պատահի որ տառապիմ, — եւ բաւական երկար ժա-

մանակ, — մեր համայնքէն դուրս գտնուած անարդարութեան եւ բռնութեան վրայ խորհելով կը մխիթարուիմ, իմ անձնական երջանկութիւնս կը չփոթեցնէ, կ'ամբնջնէ զիս, ըսաւ Պամփիլիոս ժպտելով:

— Իրաւ որ, պատասխանեց Յուլիոս հառաչելով, թերեւս երջանիկ պիտի ըլլայի, այժմ եղածէս շատ աւելի երջանիկ, եթէ չհանդպէի այն օտարականին որուն յընայ խօսեցայ քեզի, եւ եթէ ընդունէի քու պաշտօններդ:

— Ո՞վ կ'արդիւնէ քեզ՝ հիմակ ընելու այդ բանը, ժամանակը անցած է՞ բնաւ:

— Բայց կ'ընն:

— Ըսիք թէ անիկա ալ լաւ արամազրութիւններ ունի քրիստոնէութեան հանդէպ, եթէ այդպէս է, այն ալ պիտի հետեւի քեզ:

— Ճիշտ է, բայց ի՞նչ օգուտ: Մենք այլեւս ապրելու եղանակ մը ընդունած ենք, եւ խելացի գործ մը չպիտի ըլլայ յանկարծ լքանել զայն: Հիմա սկսած ենք այլեւս, եւ լաւադոյն կը թուի ինձ՝ այսպէս շարունակել մինչեւ վերջը, ըսաւ Յուլիոս՝ աչքին առջեւ բերելով այն յուսաւորպումը զոր պիտի կրէին հայրը, մայրն եւ բարեկամները, երբ Քրիստոնէութիւնն ընդունէր: Բայց ամենէն աւելի զինքը կ'անցնողն էր այն շարունակական եւ տաժանելի ճիգը, որուն պիտի ենթարկուէր այս փոփոխութեամբ:

Այս վայրկեանին Պամփիլիոսի բարեկամուհի աղջիկը՝ վաճառատան սեմին վրայ երեւցաւ երիտասարդի մը ընկերակցութեամբ: Պամփիլիոս անոնց քով դնաց, եւ երիտասարդը Յուլիոսի ներկայութեանը՝ ըսաւ անոր թէ իրենց երէցը՝ Սիրիլ զինքը զրկած էր կաշի գնելու: Խաղողնեկն արդէն ծախուած էին, եւ անոնց դրամովը ցորեն գնուած էր: Պամփիլիոս երիտասարդին առաջարկեց Մատենի հետ միասին եւս դառնալ՝ դնուած ցորենը տանելով, մինչ ինքը կը ստանձնէր գնել եւ միասին տանիլ պէտք եղած կաշին:

— Անիկա լաւագոյն պիտի ըլլայ ձեզի համար, աւելցուց Պամփիլիոս:

— Ո՛չ, աւելի աղէկ պիտի ըլլայ, եթէ

(1) Շար. 22րդ Թիւէն սկսեալ:

դուք մեկնիք Մատլէնի հետ, պատասխանեց երիտասարդը հեռանալով :

Յուլիոս իր բարեկամին ընկերացաւ մինչեւ իրեն ծանօթ վաճառականի մը խանութը : Պամփիլիոս պարկերը լեցուց ցորենով, քիչ մը բան ալ Մատլէնի պարկին մէջ լեցուց, իր ծանր բեռը ուսին առաւ, մնաք բարով ըսաւ բարեկամին, եւ քաղաքէն հեռացաւ՝ մանկամարդ աղջկան ընկերակցութեամբ : Փողոցին անկիւնը դառնալէն առաջ վայրկեան մը կանգ առաւ, գլխովը բարեկամական հուսկ ողջոյն մը տուաւ Յուլիոսի, յետոյ ասաջուրնէ աւելի զուարթ ժպիտով մը սկսաւ խօսիլ Մատլէնի հետ, մինչ անհետանալու վրայ էին իր բարեկամին աչքերէն :

— Այո՛, իրաւ որ շատ աղէկ ըրած պիտի ըլլայի ժամանակին, եթէ Գրիստոնեաներու քով դացած ըլլայի, մոտենց Յուլիոս :

Անմիջապէս իր աչքին առջեւ ներկայացան երկու պատկերներ : Նախ խմբակ մը կը ներկայացնէր Պամփիլիոսը՝ կորովի եւ քաջաոգջ, եւ անոր ընկերացող մանկամարդ աղջիկը՝ նոյնքան առոյգ, որոնք երկուքն ալ սակառներ կը կրէին իրենց գլխուն վրայ : Կարծես աչքին առջին էին անոնց զուարթ դէմքերը, որ բարութեամբ եւ ուրախութեամբ կը ճառագայթէին : Միւս կողմէ մտքին առջեւ պարզուեցաւ իր ընտանեկան յարկը ուրկէ հեռացած էր առտուն, ու պիտի վերադառնար իրիկունը : Յետոյ մտքին առջեւ եկաւ իր կինը՝ ինքզինքը բողբոջին պէրանքի տուած, որուն հրապոյրները կը սկսէին թարչամիլ, եւ որ ընկողմանած՝ կակուղ գորգերու եւ փետուրէ բարձիկներու վրայ կը հանգչէր :

Բայց Յուլիոս շատ ժամանակ չունէր իր մտածումներուն անձնատուր ըլլալու : Ծառ չանցած բողբոջին մոտցաւ զինքը վրդովող խոկումները՝ կարգ մը վաճառականներու ժամանումովը, որ եկած էին զինքը տեսնելու : Յետոյ ուրիշ ընկերներ եկան : Վերջապէս Յուլիոս ինքզինքը բողբոջին տուաւ սովորական զբոսը մնալու, որոնք վերջացան ճոխ ընթրիքով մը՝ առատ ըմպելիներով ողողուած :

ԼէՈՆ ԹՈՂՍԹՈՅ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԵԱՆՑ ԽՆԴՐՈՅՆ ՎՐԱՅ

Ազգային ժողովին անցեալ ուրբաթի նիստին ներկայացուեցաւ Վարչութեան տեղեկագիրը, որով կը պարզէր իր ծրագիրը, Հայաստանի բաղմալէտ ժողովրդեան հանդէպ գործադրուած առեւանդութեանց, սպանութեանց եւ ուրիշ այս կարգի դէպքերուն վերջ մը տալու համար : Վարչութիւնը այդ տեղեկագրով հետեւեալ առաջարկները կը ներկայացնէր :

Ա. Ազգապատկան եւ անհատական հին եւ նոր բոլոր հոգերու ապօրէն գրաւմանց դէմ բողոքող եւ օրէնսդրական խնամով պատրաստուած թաղրիքը նոյնութեամբ մատուցանել Բ. Դրան : (Այս թաղրիքը մատուցուած է) :

Բ. Ննատուրի հայ ժողովրդեան կեանքի, ինչքի եւ պատիւի ապահովութեան համար իբր արմատական դարման, վարչութիւնը կ'առաջարկէ. — 1. Փոփոխել զեղծարար եւ բռնապետական ոգիով տուգորուած պաշտօնիւնները : — 2. Վարչականապէս կամ այլ եղանակով իրենց ազդեցութեան շրջանակէն իսպառ հեռացնել իսլամ եւ քրիստոնեայ ժողովուրդները չարաչար կեղեքող միւսթիկալիստները : 3. — Օսմ. Սահմանադրութեան հրատարակութիւնէն ի վեր սպանում, առեւանդում, թալան եւ այլ ոճիրներ գործող ծանօթ մեծ ոճրագործները անաչառութեամբ եւ արդարութեամբ դատել եւ ամենախիստ կերպով պատժել յօրինակ այլոց : 4. — Պատժական յօդուածի մը յաւելմամբ եւ հրատարակութեամբ միանգամ ընդմիշտ վերջ դնել եւ արգիլել բռնի խառնացումները : 5. — Դիւզական պահակախումբեր կազմել՝ պետական զէնքերով եւ պետական քօնդորի տակ՝ դիւզացի հայ անդէն ժողովուրդին ինքնապաշտպանութեան համար՝ զինեալ քուրդ աշիրէթներու շահատակութեանց դէմ : 6. — Ա.

նատուրուի քաղաքային, զինուորական, դատական եւ ոստիկանական մեծ եւ փոքր պաշտօնէից վրայ հսկելու, օրէնքի հա- կառակ շարժողները պատժելու եւ եւ ան- դորրութիւնն ապահովելու համար Բու- մելիի նման Անատուրուի նահանգներուն համար եւս կեդրոնէն կարգել մնայուն լիազօր քննիչներ : 7. — Անատուրուի ա- լատապետ քուրդ պէյերու կողմէ հայ, թուրք եւ քուրդ ռայա կամ մարապա ստրուկ ժողովուրդէն բռնի կերպով գան- ձուած խափիր կամ կապարա կոչուած ա- պօրէն սուրբերը, եւ անկարխա կոչուած ձրի աշխատութիւններն խապա ջնջել : 8. — Համիտիէ քուրդ հեծելազօրքն եւս, ըստ որոշման Օսմ. խորհրդարանին, են- թարկել զինուորագրութեան ընդհանուր օրէնքներուն եւ չպահել իրենց ազդեցու- թեան չրջանակին մէջ, զի սահմանադրա- կան սկզբանց զլրովին հակառակ է Անա- տուրուի ներքին գաւառներու Հայերը զին- ուոր առնելով փոխադրել հեռաւոր գա- լառներ, եւ բնակակից Քուրդերը պահել սեղեռնի վրայ, առանձնաշնորհեալ զիրքի մէջ : 9. — Կա'մ Հայոց ալ ինքնապաշտ- պանութեան համար գէնք կրելու թոյլա- տրել, եւ կամ Քուրդերն եւս զինաթափ ընել : 10. — Սահմանադրասէր դպրոցա- լարտ սպաներու հրամանին տակ, կազմել չրջուն զօրավաշտեր, կարգ ու կանոնը պահելու համար մշտապէս :

Յոյժ ցաւալի է որ այս աստիճան ծան- րակշիւ խնդիր մը գոյութիւն ունենալով հանդերձ, ամսուան մը գաղարէ ետքը երեսփոխաններէ շատեր պարտաճանաչու- թիւնը չէին ունեցած ժողովի գալու, որով Ա.վգ. ժողովը մեծամասնութիւն չունեցաւ, այսպէս ամենէն հրատապ եւ ստիպողական խնդիրներ ամիսներով կը մնան ռեզանի վրայ անլոյծ, ճիշտ ինչ- պէս որ եղաւ այս հարցին համար, եւ ժողովը կարծիքներու փոխանակութիւնէ մը հաքը որոշեց երեք տարուան հնու- թիւն ունեցող Ատենապետաց զիւանի տեղեկագիրն ալ տպագրել ժողովին ատե- նագրութեան հետ :

Մխիթարական է այս առթիւ գրել որ

Պատերազմական նախարար Մահմուտ Շէվ- քէթ փաշա, կատարեալ ապահովութիւն- ներ տուած է գաւառներու տաքնասպալի վիճակին վերջ տրուելու պէտքին վրայ, եւ կը հաւաստուի թէ պատերազմական նախարարութիւնը կը պատրաստուի մեծ թուով զինուոր զրկել վանայ եւ Բաղէշի կողմերը, անդորրութիւնը վերահաստա- տելու համար :

Նոր ոճիւրներ. — Աղթամարի Կա- թող. տեղապահ Տ. Եղնիկ վրդ. կը հե- ոազրէ թէ Կաւաչի մօտակայ վանքի մը մէջ սպաննուած է ինչիկ անուն հայ մը, եւ Պետրոս անուն ուրիշ հայ մը անյայ- տացած է : Հայոց վիճակն յուսահատական է, եւ ժողովուրդը ոարսափի մատնուած՝ գաղթել կը պատրաստուի — Մուշէն ալ, ինքնապաշտան Եպիսկ. կը ծանուցանէ թէ Երեցունք զիւղէն Ստեփան անուն երի- տասարգը թուրքի ծառին վրայ գտնուած ատեն սպաննուած է : Կառավարութիւնը ձեռնարկած չէ ձերբակալել ոճրագործը, Պէ- լէքցի աշիրէթէն ինչիֆա ինչ որ անդուոյն Հայերը սարսափի մատնած է : Սասունի կողմերն ալ սկսած են շարունակ երեւան գալ զոգութիւն, թալան եւն. : — Սղեր- դէն ալ տուջն. տեղապահ Տ. Գէորգ Վ. Նալպանտեան կը գրէ թէ Ղարզանի գայ- մագամ Նաիֆի պէյի զէմ եղած բողոքնե- րուն արդիւնքն եղած է Յուլիս ամսոյ մէջ մէկ քանի Հայերու սպաննուելը, ուրիշ մէկ քանի վիրաւորուելը, կնոջ մը եւ եօթնամեայ տղու մը առեւանգուելը : Յայտնի կոտորածի մը սարսափը կը տիրէ տեղեռնի մէջ : Շարնուք զիւղի 300 Քուր- դերը միացած՝ աշարի տասանորդը չեն վը- ճարած, եւ 40-50 տուն արգահատելի Հայերն ալ կ'ուզեն վտարել : Տեղային կառավարութիւնն անտարբեր հանդիսա- տես կ'ըլլայ :

Սաւստնի բոլոր Հայերը միթիւնկ մը գո. մարելով, բողոքած են գաւառներու հարստահարութեանց դէմ, եւ որոշած են, օսմ. երկրին հանգիստն եւ երջանկու- թիւնն ապահովելու համար, ատենց ան- միջական վախճան տալու. պէտքը շեշտել ձեռնհաս Մարմիններուն մօտ :

Խեղճ Հայեր խորագրին տակ Լեվրեդ
Հերլոյս կը գրէ . — «Մեզ լուր կուտան
թէ Վանէն Պոլիս հասած հեռագրի մը հա-
մաձայն, Վանի մէջ արիւնշալի կռիւներ
կ'ըլլան Քուրդ զանազան ցեղերու կողմէ,
եւ այս կռիւները ընդհանրապէս վրայ են:

ԽԱՌՆ ԺՈՂՈՎԸ ԴՆ.Ի նիստին մէջ
անընդունելի նկատեց Երուսաղէմի Պատր.
տեղապահ Տ. Դանիէլ Եպիսկ.ի հրամարա-
կանը, եւ վարչական լիազօր պատուի-
րակ Հայկ էֆ. Խօճատարեանը հրաւիրեց
օր առաջ մեկնիլ Երուսաղէմ: Խօճատար-
եան էֆ. ԴՆ. ճամբայ կ'ելլէ: — Ծննդոց,
ամուսնութեանց եւ վախճանմանց ար-
ձանագրութիւնները կանոնաւորապէս չա-
րունակելու համար որոշեց չըջարեական
մը ուղղել հոգեւոր պաշտօնէից եւ Թաղ.
Խորհրդոց օր 1886 ասորիէն սկսեալ կանո-
նաւոր ցուցակներով հաղորդեն Պատրիար-
քարանի, եւ յառաջիկայ տարիէն սկսեալ
ամէն ամիս հաղորդեն: Պատր. Փոխանորդ
Ս. Հօր յանձնեց այս արձանագրութեանց
համար միօրինակ ձեւ մը ծրագրել եւ ներ-
կայացնել: — Դատաստ. Խորհրդոյ ան-
դամ կարգեց Տէր. Միսաք Ճիւղահիրճեան . —
Աթէնքի Հայոց հոգեւոր հովիւ կարգեց
Տ. Կարապետ վրդ. Մկրտիչեանը: — Վա-
նէն, Սղերդէն, Բաղէշէն, Խաբըրդէն
հարստահարութեանց, սպանութեանց, բռու-
նի խաւանարման եւն. գէպքերու մասին
հասած հեռագրաց վրայ, որոշեց Թաղ-
րիւններ ուղղել եւ գիմումներ կատարել
Բ. Դրան, եւ Պատերազմական ու Դատա-
կան նախարարութեանց մօտ:

ԱՐԱՅԻՐԻ առաջնորդական աթոռը
Թափուր կը մնայ տակաւին: Խարբերդի
Հայ-հռոմէականաց առաջնորդ Տ. Ստեփան
Եպիսկ. Խարայէլեան նոյն քաղաքն հով-
ուական այցելութիւն մը տալու առթիւ
սրտի զանուութեամբ դիտեր է «Հայ երի-
տասարդաց եւ նոյն իսկ տղայոց ծայրա-
յեղօրէն անզգոյշ, զրգոյիչ եւ լիբընթացը-
միով բանիւ կատարեալ անխիղճութիւն
կը տիրէ, որ ուշ կանուխ աղիտաբեր հե-
տեւանքներ կրնայ ունենալ»: Ուստի Ազգ.
Պատրիարքարան ուղղած նամակով մը կը

խնդրէ փութացնել աղքեցիկ եւ օրինակելի
վարքի տէր առաջնորդի մը առաքումը:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ. — Գոհու-
թեամբ լսեցինք թէ Ռուսահայ բարերար
մը տրամադրութիւն յայտնած է 50,000
րուբլի նուիրելու Միացեալ Ընկերութեան:
* * Տիկին Սողոմէ Տատեան (ծնեալ
Պալեան) 100 Օսմ. ոսկի նուիրած է, Պէ-
շիկթաշի Ազգ. վարժարանին նորոգութեան
համար:

ՐԱՅԵՐԴԻ նորընտիր Առաջն. Տեղա-
պահ Տ. Տիրայր Մ. Վ. Մարգարեան այսօր
վաղը ճամբայ կ'ելլէ գէպ իր պաշտօնա-
տեղին: Գոհութեամբ կը ծանուցանենք թէ
Ն. Գերապատուութիւնը Պոլսոյ մէջ իսկ
սկսած է իր Վիճակին կրթական եւ արն-
ատեական յառաջդիմութեան հոգածու զբա-
նուիլ: Մասնաւորապէս Բաբերդի վար-
դանան գիւղին մէջ կառուցուող երկրա-
դորձական վարժարանին համար մղում
տուած է նպաստահաւաքութեան: Ուրա-
խութեամբ կ'իմանանք թէ այդ նպատակին
համար 150 ոսկիի պիտական նպաստ մը
եղած է, Երկրադորձական նախարարու-
թեան պիւտճէն:

ԴՐՈՇՄԱՏՈՒՐԻ ԽՆԴԻՐ. — Կրօն.
արարողութեանց առթիւ Պատրիարքարա-
նէն տրուած թուղթերուն համար պահանջ-
ուած զրոյմատրոց խնդիրը Խառն Ժողովը
ի նկատ առնելով՝ հաստատեց թէ այն
ամէն գրութիւնները որոնք Ազգ.-Կրօն.
հանգամանք ունին եւ սահմանաւոր են
զորձածուելու ներքին շրջանակի մէջ,
պէտք է ենթարկուին զրոյմի, ինչպէս
եղած է ցարդ. իսկ այն գրութիւններն
որ յարաբերական բնոյթ եւ ունենէ կա-
ռավարական պաշտօնատան ներկայացուե-
լու հանգամանք ունին, պէտք է զրոյմի
ենթարկուին, ինչպէս արդէն տեղի կ'ու-
նենայ:

Արտօնատէր ՀՄԱՅՆԱԿ ՔԶՆՅ. ԷՔՍԵՐՃԵԱՆ

ՏԵՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԶԱՐՄԱՅՐ ՔԶՆՅ. ԿԵՉԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ

Հայս հետա

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ հրատարակութեամբն եւ «Մասքէոսեան»
սպագրութեամբ՝

ԲՐՕՖ. ՅՈՎՀ. ՅԱԿՈԲԵԱՆԻ

ՆՈՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿԹՈՒԹԻՒՆ

Դին՝ 5 դաճեկան արծար: Վաճառասե-
ղին ե՝ Միացեալ Ընկերութեանց գրասեն-
եակը, Պոլիս, Պահճէ Գափու, Սառըգիյէ
խան, Թիւ 23 եւ 27:

Ծանօթ. — Հրապարակ ելած մէն մի
օրինակ ընկերութեան կնիքէ պէտք է
կրէ անպատճառ:

Հրատարակութիւն Ա. ԵՍՁԸՃԵԱՆ գրատան
ԱՐԵԱԼՈՅՍ ԱՐԱՊԵԱՆ

ՈՍԿԵՄԱՏԵՆԻԿ ՖՐԱՆՍ ԼԵՁՈՒԻ
Ա. ԳԻՐԲ

Մանկավարժական նորագոյն մեթոտով
եւ խնամով պապրաստուած Ոսկեմասեանիկ-
ներու շարք մը: որուն նպատակն է Հայ
ուսանողութիւնն օտար լեզուի ընթերցա-

նութիւնը սորվելու վայրկեանէն իսկ հե-
տդհետէ խօսելու ընտելացնել զէմ յանդի-
մանական ուսուցմամբ:

Դին ներկայ Ա. գիրքին 3 զրշ: Մամ-
լոյ առկ են Բ. եւ Դ. գիրքերը: Ջերմա-
պէս կը յանձնարարուի Ազգ. վարժարան-
ներուն:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՔՆԱՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Պատրաստեց՝

ԿՐԾՆԻԴԷՍ ՔՇՆՅ. ՆԱԼԱՆԳԵԱՆ

Կարեւոր պակաս մը կը լեցնէ եկեղեց-
ւոյ երաժիշտ մանուկներու համար, որոնք
ասոր գործածութեամբ ա՛լ պէտք չպիտի
ունենան ժամագրքի, տաղարանի, շարա-
կանի, փոխառացի եւ այլ յարակից տես-
րակներու եւ գիրքերու: Տէր եւ հրատա-
րակիչ Աղեքսանդր Եօզկասեան: Տպ. Մար-
գուան, «Կիւթէնպէրկ» տպարան, 1911:
Դին 7 զրշ: (մէճիտ 19էն): Բօսդի ծախք
30 փրյ: 3—1

ԳԻՆ 1 ՂՐՈՒԾ

Տպագր. Տ. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ

Սուրբան-Հանամ Մօլա-Թաշը, Թիւ 16

Կ. ՊՈԼԻՍ